



45. ԾՈՎՈՒ ԴԱՄԱՍ

Ժամանակը կիլնը թագավորը, ուր իրիք լաճ: Թագավորը աչքեր կը պըռվը:

Թագավոր կըսը. - Իրիք լաճուց ուր կանա իմ աչիչ տեղ բիրը, թզոյ յա, ծի խամար տեղ է:

ճիւչ լաճ գընաց, կան իրը, իրիք օր վերա ընցավ, չըկարցավ կընտըներ, տարցավ, իրը:

Միշնիկ լաճ գընաց, վեց օր կան իրը, ան էլ չըկարցավ կընտըներ, տարցավ, իրը:

Պըզտիկ ախաբե՞՝ Միրզո, գընաց, տասերկու օր կան իրը, գիշիր իտու վերա, լուսըմ երեվաց, գընաց, մոտխընցավ լուսուն, կը խը, ատ լուս խավքու փառ մը գետին լուս կը տա, ծիուց պայա էլավ, ատ փառ առեց, եզար ուր գըլոխ:

Ճիուն լեզու իրը, եսաց. - Աւտա փառ թը՛դ, ատ փառ քիւ գըլոխ շատ տը ցանցըցը:

Եսաց. - Չէ՛, նա գիշիր կենա իմ գըլխու վերա, ցերեկվան թարզ լուս տ'իլնը, հուր իմ ջան ուզը, տ'երթամ:

Ճին եսաց. - Տը փոշմանիս, տիւ գըտիս:

Ճին խեծավ, գընաց ան տեղաց ուրիշ կազեմ ընկավ տուս, թագավորը սարը փանջարեն տակ վե ընչ կը ընցնը, ատ փառը շառավիլք իտու թագավորը հօդի մեջ:

Թագավոր եսաց՝ նա ի՞նչ լուս էր, մարթ հորողկից, եսաց. - Գընա՛, իրիշկը՝ ի՞նչ կը:

Գընաց, իրիշկից, կը տեսնը՝ մարթըմ ծին խեծիր, փառըմ գչ գըլոխ, ատ փառիցը լուս կը տա:

Իրը, եսաց. - Մեկ մարթ մը ծիով ընցավ, փառըմ գհ գըլոխ, ատ փառիցը ատ լուս:

Թագավոր եսաց. - Գացեք, ատա մարթ բըռնեք, բերեք, մը-հա ատ ի՞նչ փառը:

Գացին, բիրին մարթ, իրը էլ նա ծիով կամ պերնեն էսան, հանա ծին ացկուն երող, գընաց թագավորի մոտ:

Թագավոր, ատա Միրզոն նըստան իրիք օր, ատ փառ տըրին մանչ ուրինց, թամաշա արին, դորսեն քաղքը միլաք, ուրզիր, մալխոն, սիցին. «Մի թագավոր փառըմ ապով նա իրիք օր նըստիր, թամաշա կանը, մի բանեն չիրիլկը, ան մարթուն մընակ կը նայը, էլ մի խիտ չըզորուցը: Պիրենք նա մարթ անցկուն անենք, ուզը եր-թա կուրուսա, ալ չոգան արտա թագավոր տառնա վար մի»:

Դորսեն ուրզիր, մալխոն կերթան թագավորին կըսին. - Անիկ խավքու մեկ փառը, ընցնեմ լուս կը տա, ան խավք կըսպ բիրին քի, օր տղնիս քիւ հօդեն, գիշիրն էլ լուս տա, իլնը քանց ցերեկ:

Թագավոր եսաց. - Վո՞վ տ'երթա ան խավք բիրը:

Ուրզիր, մալխոն սիցին. - Նա փառ վով բիրիր, ան էլ էն տ'եր-թա բիրը, ան գընաց դուր կա:

Թագավոր ատ Միրզոն եսաց. - Քենե կուզիմ՝ նա փառը տեր խավք, յա՞ն բիրիր, յա՞ն քիւ վիզ կը զանիմ:

Դորսեն Միրզոն ծին կիյնը ուր միտ, կըսը. - Ահա իրիք օր կա ծին անութը յը, ալ իս ինչըխ անիմ:

Գընաց, նըստավ ծիով մոտ, ձեռ խոռ կամ իպը, ծին էլ կիրիշկը իինը, իրիք օր կա անութը յը, ոըկիր ը:

Միրզոն խավքու տեղ չըգընա դո՞ւրն ը, չըգըտնա դո՞ւր կա, ան էլ էլաց, նըստավ ծիով մոտ, զինք եթալ վար ծիով ուրտքիրուն:

Զին էլ էլավ, խեղճ եկավ, լեզու իրը, եսաց. - Չէ՞ քի սիցը՝ փառ մ'անը, ատ փառից շատ պալա տը քեշիս: Քիւ թագավոր ի՞նչ կուզը:

Եսաց. - Ան փառը տեր խավք կուզը:

Եսաց. - Գընա՛, քիւ թագավորին սա՞ քառսուն պեռ կուրիկ, երկու պեռ ցուրին տա պառնալ, գա տանենք հանտե, ծի խեծնը, ցանը ու գընաց, ատ քառսուն պեռ կուրիկ ցանը ու գընաց, անցկուն իլնը՝ իրն առտը մեջ երկու կուրիկ իյնը: Ատ երկու պեռ ցուրին, ան

փառ ընչ ընկեր էր, ոի՛ ան փառը տեղ, պերան բա՛ց, ան թեռը տակ փո՛ւրը, իսն էլ, տու էլ պաղկվինք ատ թեռան տակ, ըզմի չըխին, ան խավքն էլ խավքիրու թագավորն ը, արիկ տեղնը, ան խավքիր կը գան, կիրիշկին, կը խին, կը գան, կերթան խավքիրու թագավորին կըսին. «Երկրը թագավոր զիաֆաթը տըվիր մի խավքիրու թագավորին, էլե՛ք էրթանք»:

Քանի՛ն խավք կա, զուրենց թագավոր կառնին խատ ուրենց, կը բիրին, կը դնին վար ատ ցուրնը պերնին, դորսեն ատա մեկէլ խավքիրուն տաստուր կը տա, ցըովին ատ ցանուկ կոըրկըտիր ուտին, ատ խավքն էլ դողա կանը թագավորին, կըտուցըմ կը գարկը, ատ մեկ կամ սաղ կը վիրուցը, կը կայնը գըլոխ կը պանցրացը, կենա թագավորին դողա կանը, Միրզո կը թալը, ոտքիր կը բըռնը, զուր ծիմ՝ կը խեճնը, կը փախը:

Չուր ատ խավքիր կոըրկըտիր կը քաղին, էլ չըն տեսնա զուրենց թագավոր, ալ չըն գըտնա դուրը տարած, Միրզո կուրախանա, զգխավք կառնը, կը տանը թագավորը խամար, կերթա կը խասնը թագավորը սարեն, խընտալուց էլմէլ ծիու կամ չառնը տակ, անութը կը թըղնը հանտե, կը յա մատ թագավոր, խավք կը տընը հանտե, շատ կը խընդանա: Գիշիրն էլ կիլնը հնչըխ ցերեկ, ատա ուրգիր, մալխտն կըսին. «Զանըմ, մենք հորողկիցինք ուըր էլ չօգեր, նա գընաց, իհը, ապա նա հուրդե՝ հորողկինք, օր յա ալ չոգա, սինք սերըպանտ խանըմըմ կա ֆըլան տեղ, անիկ խավքիրուն լեզուն կը խասկանա, ան գա ցատա, նա խավքու լեզուն տը խասկանա, կը թարկմանը, մարթ կը հիմանա, անու լեզուն շատ անուշ կիլնը»:

Թագավորին սիցին. - Թագավոր ապրած կենաս, ան կընիկ գա, նա խավքու լեզուն թարկմանը, շատ աղեկ կիլնը, էլ կըսուր չըմընա:

Եսաց. - Ապա վո՞վ տը բիրը:

Սիցին. - Փառ վովը բիրիր, խավք վովը բիրիր, ան էլ ան տը կարը բիրը, քանց ան ավիլ:

Թագավոր կըսը. - Միրզո՛, քյենե կուզիմ՝ էրթաս ան խանըմ բիրիս, թե չէ՝ քիւ վիզ տը գարկիմ:

Էլմէլ Միրզո կիլնը, ծին կիյնը ուր միտ, կըսը. - Զին ոըկիր ը, ալ վով ըգի տը տանը հանտե:

Կիլնը, կերթա մա ծին, ծիուն յալվարմիշ կիլնը, ծին չոգրուցը խիտ, ան էլ սրհարթ նըստավ, ծիուն լավա արավ, զատ խոռու, ան կերավ, ծին զրուցեց:

Զին եսաց. - Ի՞նչ իլիր, Միրզո՞ւ:

Եսաց. - Թագավոր կուզը, կընիկըմ կա նա ֆըլան տեղ, կասա՞ խնավքիւ լեզուն խասկընա, թագավորի խնամար պատմը:

Զին էլ եսաց. - Գընա՞՛, քու թագավորին սա՞ չափըմ ցուրին, մեկ աղ խառնը իիրար, աղա, անը մեկ-էրկու կըլուծ:

Միրզու գընաց, խոռու շինել, առից, իրը, ծին խեծավ, գընաց, մոտխոցավ ատ խանըմու կազին:

Զիուն լեզու իրը, եսաց. - Կատղած շու՞ն կա ճամբիսը վերա, թու խան չըկանա ընցընը, ան շուն կը գա, ատ մեկ կըլուծ թա՞լ, թըդ ուտոց, չուր ատ ուտոց, մենք կերթանք գյիտու՞ն կը մոտխոցսնա, ինչ կը տառնա, կը գա, ան մեկել կըլուն էլ դու թըդ ուտոց, անցկուն կը ծարավնա, կը խասնը վար ատա արնե գյիտուն, շուն ընչ ճուր կը խըմը, կը խատնը: Մեկել ինչ կը խասնիս ատ գյիտուն, սա՞ օ՞խ, սա ինչ անուշ ճուր ը, իս լազ չիլներ, աղու՞ն տը խըմեր, կերթաս, հանտե տարկախըմ կա, կը խասնիս տարկախը վերա, անիկ սերըպանտ ը, չըգրուցիս, թարանջեն վե կիլնիս վե, անու մազիր կը պլոնիս, կը քյելիս, ինչ թարանջեն վե կը քյելիս, անու քըթեն իրիք պուտ արուն տը գա, ինչ արուն տը գա խան վե, սերին տը պատլը: Ինչըս կուզիս, անցկուն արա՞՛, դորսեն անու սերին կը պատլը, քո խոր աշէ տեղըն էլ կը հականատ կութին վե, կութին կառնիս, կը տընիս քու ծուց, կը բիրիս:

Ինչըս ծին Միրզոն թարիֆ արավ, Միրզու ացկուն արավ, առեց, իրը թագավորը մոտ, իրիք օր վերա ընցավ, խավը տորիս կը զրուցը, կընիկ թարկմանը, ինկած ուրենց քեֆը խիտ:

Ուզգիր, մալիսոն սիցին. - Ապա ի՞նչըս անինք, դո՞ւր կուրսոցիք, հորողկենք Ծովու համամ բիրը: Ան չըխու չըկարը մըտնը ծովու մեչ:

Թագավորին սիցին. - Չատ աղեկ ը, շատ անուշ բան ը, համան թա՞ն կա պակաս:

Եսաց. - Ի՞նչ կա պակաս:

Սիցին. - Թու յալ ծիրացիր իս, քյի կըազ Ծովու համամ, համ ծի յը խեծնիս, համ քամկը վերա համամ ը, ինչ լողկանաս, տ'իլնիս երսուն տարեկան:

Կըսը. - Ապա վո՞վ տղ յա, բիրը:

Կըսին. - Վու խավք, կընիկ բիրիք, ան էլ ան տղ յա, բիրը:

Կըսը. - Ղե՞հ, Միրզո՛, քյենե կուզեմ՝ յաս, Ծովու համամ բըռ-
նիս, բիրիս, համ ծի յը, համ համամ ը, յան չէ՝ քու վիզ կը զարկեմ:

Կըսը. - Յա՛յ, հո՛յ, իմ ծին էլմէլ մընացիր անութը, ծին չիլնը,
իս չըմ կանա բիրը:

Գընաց մատ ծին, կը խը՝ կհրապեք առիր իիրար, անութընե
ականջքյիր շոռ առիր, մաղտեն արիր, կայնիր հանտե, ան էլ կամ
պերնեն առեց, իազ տակ: Գընաց, փըշու՛մ խուտ իազ, իտը
իիրծիվ ծիուն, էլմէլ յալվարմիշ արավ:

Զիուն լեզու իրը, էսաց. - Թըղ տու կամ իմ թերնեն խաներ,
իս փըշու՛մ նա կըրլմըշքիր ուտեր, պաս էր, տու իմ կամըն էլ թը-
ղիր իմ պերան, գացիր, ընկար խա քիւ թեֆին, գընաց, ջայնամ,
թըղ քիւ վիզ զարկեն:

Մարթըն էլ շատ յալվարմիշ կիլնը ծիուն, ծին կըսը. - Ի՞նչ
իլիր, ի՞նչ կուզը:

Կըսը. - Յա՞ն տէրթաս Ծովու համամ բիրիս, յան քիւ վիզ տղ
զարկեն:

Կըսը. - Յայտե՛, ուզր քիւ վիզ տղ զարկեն, յանք, թը կար-
ցանք բիրինք, թա ըլկարցանք, խընտրաց մեռնենք: Գընա՛, սա՞
քառսուն գոմշու կաշը օժուկ, քառսուն էլ քիսա պըր թե թախիս՝
տրզկըցըցին, բի՛, ա՛ն վար ծիկ, սադ ծածկիս, իմ լեշ տեղըն չէրե-
վա, ան ինչ Ծովու համամն ը, իմ մերն ը, տըսընմեկ քուրիրն էլ իմ
քուրիրն ին:

Կէրթա կը բիրը, կը հազրը, կառնին, կէրթան ծովու պերան,
ծին կըսը. - Ես կը կայնիմ ըստա, տու էլ նա քար շո՛ն տու, կամ
կա նա քարը տակ, ատ կամ խանիս, բըռնիս ծեռ, իրիք տիր զար-
կիս ծով, թելիս, Ծովու համամ՝ իմ մեր կը գա, ինչ կը գա, տու
կըտրի՛ կաց, ըզկամ գա՛ր պերան, զըյի թա՛լ թամակ, տ'սըր քիկ.
«Իսա՞ն օղլի, ըզքյի տղ խանիմ իիրծիվ արեգական, ըզքյի տղ
վառիմ», տու սա՛. «Մըրա՛զը ծի, իս ծի կը տամ քու փուրու տակ»,
տըսը. «Ծզի վիրուց կը զարկիմ տակ, փարչա-փարչա կանիմ»,
սա՛. «Ես կիլմիմ վար քիւ քամկին, էլ չըս կանա ըզի զարկը տակ»:
Զին կըսը. «Ծզքյի անցկում կը վաչկազցիմ, քյի կը զարկեմ
քարեքար, փարչա-փարչա կանիմ», սա՛. «Ես ըզի վար քիւ
քամկին անցկում կը բըռնիմ, Աստըծով թան չիլնը»: Դորսեն ատ

ինչ ծովեն տ'իլնը տիւս, տըսնըմեկ ջըվանի անու խիտ տը գան, ին քուրիրն ին, ինչ աչ ինը ըգբյի, տը լարին իմ հիտիվ, իս տը փախիմ, տու էլ կահիմ կաց, ըզանունց մեր կահիմ բընը՛, թը գանվիցիր, անունք ալ բան չըն կանա անը, թը չէ՝ զի էլ, ըգբյի էլ տ'ուտիին:

Զին անու շանք տալու թարգ անու կիրա կանը, Ծովու համամ կը խեծնը, կը գանվը, դորսեն կը կանչը ան տըսնըմեկ ջըվանանց տիրուն, վազ կը գան, անունք ըզձին բըռնած թաղուքիր, կալիք փըտըռտալ, լալելեն տալ բա՛մ չարած, մեր կը կանչը, կըսը. «Տա՛ր կացեք ծյի քըրոչ մոտեն, իս հանդըվա, տիւ էլ էկե՛ք ռայը»:

Զիանք ջուվանիքըն էլ կը գան, մա մեմեկ կը խընտանան, կիլնին տըսըվէրկու ջըվանը մեկ Ծովու համամ:

Կառնին, կը գան, կը խասնին մա թագանվոր, Ծովու համամըն էլ կըսը. - Արը, թագանվոր ըգբյի տը սպանը, տիւ էլ ա՛րը՝ իս զիմ քամակ տանիմ համամ, լողկա՛ցը մեչ, տիւ կը ջրիելանաս, թագանվոր ինչ տեսնը, տիւ կը ջրիելանաս, անունքըն էլ կը գան, տը լողկանան, իսն էլ իմ քամկը վերա կանիմ մեկ-մեկ կազան, ինչ անունք կը մըտնին մեչ, կը ջոչացըցիմ, կը խեղտըվին:

Անցկուն կանը. անունք կը խեղտըվին: Կիլնը, ըգխավը, ըզկընիկ, ըզտեղ կառնը, ջուվանիք, Ծովու համամ կառնը, կը գանուր խոր էրկիր:

Ջըհապ կէրթա անու խոր, կըսին. - Քիւ լաճ՝ Միրզո, իրը, լուսու խավըըն կի խիտ, Սինամ փարիմ կի խիտ, Ծովու համամ տըսըվէրկու ջըվանը կի խիտ, աչիչ տեղ կի խիտ:

Նայիսա գընաց ուր տեղ, խեր անու գըլոյս պագնեց, վար մեմեկը խընդացան, աչիչ ծուր էգար խոր աչիչ, փառ քըսից վերա, ծըրավ, խերըն էլ իրիշկից, ըզատ խանըն սերտ վերա ավրավ, ուզեց ըզլամ կուրսըսցեր, ուզր ըզխանըն առներ, Ծովու համամ էսաց. «Քիւ խեր կուզը՝ ըգբյի կուրսըսցը, ըզքիւ կընիկ առնը, թիւ խոր սա՞ կակո՛, տիւ խալվուրցիր իս, պետք ը՝ տիւ էլ լողկանաս մա նա Ծովու համամին, ջրիելանաս»:

Ան էլ կը լողկանա, կը խեղտըվը:

Միրզոն էլ կանին թագանվոր, կը տընին թաղը, յոր օր, յոր գիշիր խարսնիս արին, անունք խասան ուրենց մըրազին, տիւք էլ՝ ծեր մըրազին: